

# ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՐԱՏԻ ԵՐՏԻՆԵՐԻ

ԳԱՅԱԶԱՐ

## ԿԱՄՈՒՐԱԿԱՆԱՑ

Մայրավանացս Ձեռագրատան Յանկը Խառուած ժամանակ երբեմն՝ հանդիպած էի Աղքարանուրիմ կամսարականց խորագրի մը, բայց ուրիշ գործերով զբաղած ըլլալով՝ զանի ուշագրութեան առած չէի:

Վերջերս յիշեալ Յանկը թղթատած պահուն նոյն զրութիւնը դարձեալ աչքիս զարկաւ Ա. տափ ներքե, այլ առաջինէն տարրեր այս վերտառութեամբ։ Աղքարանուրիմ Այլանվերտեան տոհմի  
(կամսարականց):

Երկու վերտառութիւնն իսկ հանգուցեալ Հ. Ղ. Ալիշանի գրչութեամբ զրուած են, և անոնց իրարմէ ունեցած տարրերութիւնն իսկ յայտնի նշան մ'է՝ թէ Ազգագրանութեանս բնագիրն անվերնագիրը ըլլալու էր, և կամ փոխանակ իրեն պատկանող վերնագրին՝ ուղերձ մը ունենալու էր իր ճակատին վրայ: Եւ ստուգի՝ երբ որոնելով գտայ զայն Զեռագրատառանս իլլ. Տուքին (Խմբ.) մէջ՝ ենթադրածն ճիշգ եւլաւ:

Գրուածիս հեղինակն-ինչպէս և Ալլահ-վերտիներուն նուիրողն-եղած է կարնեցի Սերորէ Վ. Բաճեան, որ ակները կը տեսնուի ուղերձը ամրողջացնող այս տողէս իսկ: «Վերընծայէ Զեզ Հայրենակից Զեր Սերորէ վարդապետ Բաճեան»: Իսկ գրութիւնը կը բաղկանայ 32 միջակաղիր երեսներէ: Որոնց առաջին երկու երեսները կը կազմեն Յասաշարանը, իսկ վերջին երկու էջերում կու տայ մեզ Շաղագոմ զաւաոի ինամուս և շահագրգիռ տեղագրութիւնը՝ ինճիճեանէն յոյժ տարրեր և ընդարձակագոյն: Ամբողջը բաժնուած է 19 գլուխներու:

Բաճեան վարդապետն՝ Ալլահվերտեան տոհմի ազգագրանական այդ պատմութիւնը յօրինելու համար՝ յամին 1852 Հնդկաստանէն կամ Ղարաբաղէն գործի համար կարին եկող հայագիր օտարականի մը ցով տեսեր և կարդացեր է՝ ըստ իր յայտարարութեան<sup>2</sup> — կամսարականաց ձեռագիր պատմութիւն մը, — վերցուած Սպերու. Ա. Յովհաննեն վանքի մութ անկիւն մը փոշիներուն մէջ թաղուած գրչագիրներէն: և թէ այդ անանուն պատմութեան մէկ մասը՝ որ կը համնէր մինչև ԺԶ. դարուն վերջերը, այդ ժամանակ ապրող մէկու մը ձեռքով գրուած ըլլալու

էր. իսկ միւս մասը՝ որ կը համնի մինչև 1694 թուականը՝ ուրիշ անանունէ մը գրուած է, որպէս շարունակութիւն մի և նոյն պատմութեան: Այս թուականէս ապա մինչև յամին 1858 ինքը Բաճեան վարդապետն է որ կը հիւսէ Ալլահվերտեանց պատմութիւնը՝ իրըն կամսարականց օրինաւոր պայազատներու կամ վերջին շառաւիդներու: և կը հիւսէ զայն հաստատուած մէկ կողմէն ԺՅ. դարում ապրող և այդ իշխանական ընտանիքը լաւ ճանչցող ծերուամիներու աւանդութեանց և միւս կողմէն ալ կամսարականաց և Ալլահվերտիներուն սեպհական եղող բնակավայրին՝ Երաշխուատի (Սպեր գաւառին մէջ), անկէց կարնոյ կողմէրը, այսինքն՝ Հինձը գիւղը գաղթելու պատմական արարուածոց՝ ինչպէս և անոնց նախկին կամսարին անուանակոչութեան վրայ:

Հ. Ղ. Ալիշանին արդէն ի վաղուց ծանօթ ըլլալու էր այս գրութիւնս, վասն զի Մանուէլ Լֆ. Եսայեան յամին 1859 կ. պօլսում ընդօրինակելով զայն Բաճեան Վյ. բնագրէն՝ յաջորդ տարին իւր ձեռքը հասուցեր էր ի Պարփզ, ըստ որում նշանակուած է ընդօրինակութեան ներքին պահարաններուն վրայ: Խակայն՝ զիտցածիս համաձայն՝ յամին 1880 միայն առիթ ունեցած է Ալլահն յիշել այդ գրուածը «Եփրակ»ի մէջ, եր. 6, այսինքն՝ այդ զաւաոի նախկին տէրերուն՝ կամսարականաց վրայ խօսած միջոցին: Բայց երկրայելով անոր վաւերականութեան վրայ՝ զանց ըրած է մեծ չափով օգտուիլ անկէ, այսինքն է կամսարականաց զէթ ազգացուցակը ամրողջացներու: այլ բաւականացած է 789 թուականէն վերջ անոնց գաղթին վերաբերեալ մի երկու տեղեկութիւններ մէջ բերելով: Ահաւասիկ իր խօսքերը. «Զայսու իսկ ժամանակաւ (բաս նորայաց) և ոչ աներկայ գրուածի իրիք ցեղարանորեան կամսարականաց, յորոց սերեալ ցուցանե գազանական տոնենն Ալլահվերտեանց՝ որ արդ ի կ. Պոլիս), յամի 780 խոյս տան կամ սարականց Բասենոյ՝ տեարք Բողբերդի, յիշեաց Արարաց, և երթան ի Շաղա-

1. Այսինքն կը կրէր այսպիսէ ուղերձ մը. Ազնուաց պայազատն Ալլահվերտեան տան՝ Աղո Գէյ, Յակոբի Աղո, Պօղոսիկ Աղո, Նազարէմ Աղո, Զեզ Նուէր և ուղերձ Հայրենեան՝ հակիմ Ազգագրանօրին պատմութիւն Դիցազուն Նախենեան Ազնուածեար Գնքանատներու:

2. Տես եր. 5, «Ծանօթութիւն յիշեալ անանուն հեղինակն վրայ» խորագրուած զլումը:

գոմ՝ ի բերդն Վարայր—Վայրի, զոր անդրստին ի Դ. զարէ առեալ էին ի պարզէ ի կայսերէ, ի ժամանակի կոսորածի տոհմին իւրեանց՝ Ալբակայ, ընդ նմին և զԵրաշխուս զեօլ, զայժմեանս խաչուս ի թորթում. և երբեմ երբեմ զօրացեալ տիրէին և կողմանց Ապերոյ. սերունդը նոցա ի կէս ժի. դարու գաղթեցին ի կարին, և անտի ի կ. Պօլիս: Բաս այսմ զբուածոյ ի կամսարայ նահապեատ տոհմին ցայժմեան յետին սերունդս Ալլահէքտեան տոհմի 40 ազգց լինին, զորս և յանուանէ կարգէք բայց զի ուրեց ուրեց յերկար միջոցց են ժամանակի, փոխանակ 40ից պահանջնին իրբ նոյն օրուն:

իրաւունք ունէր մեր մեծանուն մատենազիրն երկրայութեամբ վերաբերուիլ զէպ ի այսպիսի մի զրուած՝ որ մինչեւ այդ ժամանակ զեռ չի լուսած նորութիւն մը կու զար յայտնել մեզ, այն է՝ նոր ժամանակաց Ալլահէքտեան տոհմի հինաւուրց կամսարականներէն սերեալ պայազատութիւնը. բայց և փափաթելի էր միանգամայն՝ որ նա ինքն Ալիշան՝ իր ազգային հնառութեան վրայ ունեցած ամենամեծ հնառութեամբը փորձէր կանգ առնուլ այդ զրութեան վրայ և լուծել իր երկրայութիւնը, որով և զմեզ իսկ երախտապարտ կացուցած պիտի ըլլար:

Յամենայն գէպս՝ ըստ իս կրկին տեսակտերով հետաքրքրական է զրութիւնս և առանձին հրատարակութեան արժանի. այսինքն՝ նախ որ մինչեւ ժի. դարու կէսիրը կամսարական իշխաններու զոյսութիւնը և քաջագործութիւնները կը մատանանչէ մեզ համառօտիւ, մինչդեռ մեզ ծանօթ տոհմային պատմագիրները՝ թ. դարուն վերջիրը լուսութեան թանձը վարագոյրը կը ճգին կարէնեան Պահլաւէն սերած այդ փառաւոր տոհմին զիւցազններուն վրայ, ըստ վըկալութեան Հ. Ալիշանի: Բ. որ իրը սնընդհատ յաջորդութեամբ անոնց արժանի պայազատներ կը ցուցնէ մեզ Ալլահէքտեանները:

Բաց աստի՛ ուրիշ կէտ նպատակ մ'կա նկատած եմ գործոյս հրատարակու-

թեան մէջ, այսինքն՝ յուսաւով որ Աերութէ վ. Բանեանէն ափ յափոյ համառօտուած այդ ազգարանութիւնը ծանօթանալով ազգային հնախոյզներուն, կը փութան անոնց ի լոյս ընծայել նաեւ կամսարականաց պատմութեան ամրողջ հին բնափիրն եւս, որ Ղարապալէն եկող օտարականին հետ եղերեզական կորուստի մը մատնուեր է բաս տեղեկատուութեան Բանեանի, և անոր ուր ըլլալը այժմ չգիտցուիր: Բայց զրութիւն մամուլի համատարած թեեր ազուցած և ի սփիւս ազգայնոց թուուցած ժամանակ՝ կը զգամ անոր գործէլիք օգտակար ազգեցութեան հետ՝ նաեւ ծանր պատասխանատուութիւն մը պատմական ըննաղատութեան առջեւ. հետեւարար՝ ինձ պարտը կը համարիմ սոյն ներածութեամբս ըստ կարեւոյն համառօտիւ և չեղորդոէն հետազոտել նախ անոր վաերականութեան նպաստող և ապա հակառակ փաստերը, և այնպէս ներկայացնել զանի ընթերցող հասարակութեան, ճոխացնելով նաեւ մոռցուած անուններով և լուսարաննելով միանգամայն ծանօթագրութիւններով մեր բնաւորի թերութիւններն ու կասկածելի կողմերը:

Ահաւասիկ այն փաստերը՝ որոնք կը նպաստեն Ազգարանութեան հարազատութեան:

Ա. Մերունիներէն առած մեր տեղեկութեանց համաձայն՝ Ակրորէ վ. Բանեանը՝ թէ կարոյ մէջ և թէ՛ ի կ. Պօլիս ապրած միջոցին՝ խլճամիտ, լուրջ և բանիրուն մարդու հոչակ ունեցեր է. հետեւարար զժուար է որ նա ուրիշէն դիւրաւ խարուած ըլլայ և կամ Ալլահէքտեան ազգեցիկ Ամիրանները սիրաշանելու համար ինքիրմէ այնպիսի կեղծիք մը հնարած ըլլայ, գիտնալով որ կարող էր ուշ կամ շուտ այդ բանը յայտնուիլ և զինքը վարկարեկ ընել:

Բ. Կամսարականաց առանձին Պատմութեան մը գոյութեանը կը վկայէն նաև Թաթլոյ և Վարոսի պատմութեան հեղինակը Յովսիա և ուրիշ յետազայ պատմագիրներ եւս: Այս բանս առանց երկրայու-

թեան է. բայց թէ այդ մեզի անյայտ պատմութիւնն ի՞նչ ոճով գրուած էր և թէ ի՞նչ աղերս կարող էր ունենալ կամ ոչ ներկայիս հետ, այս մասին վերջին կը յայտնեմ իմ կարծիք:

Գ. Բանեան վարդապետն՝ անանունին վրայ գրած ծանօթութեան մէջ՝ անկէ չըրս տող հատուած մը կ'արտազրէ, չակերտի մէջ, որ ուղղուած է Ներսէն կամսարականին իրը բնծայական, և կը մկիր. «Քանդի դու ի նախնեացն բնոյն շառաւեղ ծաղկեցար յանքարի ժամանակին», ևն: Արդ՝ այս հասուածն ոչ Բանեանէն յերիւրուած և ոչ ալ Ժ. գարուն ապրող մեկու մը զբչէն կրնայ եւած ըլլաւ այլ հաւանօքն աւելի հնագոյն կ'երևի ինձ: Այսպէս նաև Ե. զլիում խտալիոյ կառավարիչը հայկազն Ներսէն Պատրիկը՝ Արշակը կամսարականին որդի աւանդելը, — Բ. զլիում Հազարացւոցմէն նահատակուած սուրբ Կոյսը՝ 706ին ապրող Ներսէն կամսարականին դուստր և Շուշան անուանելը, — Ժ. զլիում մէջ Յովհ. Զմշկիկ կայսրը՝ Սահակ կամսարականի Արուանեակ աղջկանէն ծնուած և Խաղաքաց թէոփիլոս իշխանին թռո համարեն, — և Ժ. զլիում յանուն անանուն շարունակողին մէջ բերուած ընդարձակ հատուած՝ ուրացեալ հայու մը՝ ֆլէրիի, Շաղագոմի և Երաշխուտի հայ ազգարնակութեան վրայ գործած ահաւոր բռնութիւններն ու մահմէտականացումը և կամսարական իշխանին՝ այն է Ներսէսի վերջնոյ՝ ընտանիքով կարոնյ Հինձք զեղը զաղթելը 1652 թուականէն վերջ, ևն, ըստ կամս հնարդուած չեն կրնար ըլլաւ. հետեարար՝ գրաւոր աղրիւք մը կը յառաջագային գէթ ըստ արտաքին երկութիւն:

Դ. Նպաստաւոր փաստն է մէկ կողմէն դեռ յամին 1846 Տաշրաց գաւառի (Մաղեկ) գիւղի մէջ ապրող հին Երակցի 90-ամեայ Տիրացու Անաստաս հայ-հոռոմի վկայութիւնը, որով կը կազմուի ընդ մէջ 1694ին մօտերը վախճանած Ներսէն կամսարականի որդույն Սահակ քեանեայի (որ կամսարենը կամ Գամսարինը մականունը

կը կրէր) և ընդ մէջ Ալլահվէրտեան ազգաստումի Աստուածատուր ամիրային, որ Ասակին անմիջական յաջորդ նկատուած է՝ Եաղգոմի Խաշուտ կամ Երաշխուտ զիւդում ունեցած նախկին բնակութիւնն, և միւս կողմէն ալ կարնոյ Հինձք կոչուած զիւդի մէջ կատարուած արարուածները, որոնց առանց Երկրայութեան իրը պատմական ճշարտութիւնները ըլլալու հիմք ունին, և չեն կրնար լոկ այլընդայլոյ աւանդութիւններ նկատուիլ:

Ե. Դիտելու ամենակարևոր և պատմական կէտ մ'ալ այս է, որ կամսարական իշխաններն՝ Արշակայ օրով կրած կոտորածէն տարիներ վերջ՝ ոչ միայն վերստին զօրացան և իրենց ի բնէ բեղմատոր և բազմածին ժառանգներով զրաւեցին Նախճուաններն սկսեալ մինչեւ Երակ և Արշարունի գաւառները, այլ և Տայրէն մինչեւ Բասեն ձգուող Երկիրներն և բերդորէք: Ասկէ զատ անոնք յունական սահմաններում և բիւզանդական կայսրութեան մէջ իսկ տարածուելով՝ որպէս քաջարի զինուուրականներ՝ մեծամեծ գեր խաղացին: Դարձեալ անոնք բաց ի Մամիկոննեաններու և Սուրէնեան Պահլաւունիներու հետ ազգախառնուելին, բաց ի տովորական կամսարական մականուննէն՝ մերթ Արշակունի և Պահլաւունի ևս կը յորջործուէին մօր կողմէն, զի իսկապէս այնպէս ալ ին ըստ վկայութեան Մ. Խորենացւոյ (Բ. 28), յուն. Ազաթանգեղոսի և կեղծ Եպիփանի (տես Ազգբանագիր Արարածոց, ճառ ԺԹ.): և մերթ ալ պարզապէս Տիերը Երակայ, իշխանց Բագրեանդայ և Արշարունեաց տիտղոսները կը կրէին: Այս պարագաները քաջ ի նկատի առած պէտք չէ կարծել բնաւ որ այսպիսի մէկ բազմատարած ընտանիք մը Ժ. զարուն սպառած ըլլաւն պարզ անոր համար՝ որովհետեւ անկէց վերջ մեր միջնադարեան և յոյն պատմիչները որոշակի և յաճախ կամսարական ազգանունով զանոնք յիշելու առիթ ունեցած չեն: Իրաւ է որ քանիցս կը կարդանց Մատթ. Աւոհայեցւոյ, Ա. Լաստիվերտեցւոյ, Առաք. Միւնեցւոյ և Թովմ.

Մեծոփեցւոյ աղի արտասուբով գրուած պատմութիւնները . քանիցս կը տեսնենց Արարացիներու, Թաթարաց, Թուրքմէններու ամ յամէ իրարու յաջորդող արշաւանցներն ու հասուցած անլուր կոտրածները . մանաւանդ թէ քանիցս կը նկատենց Հայաստանը ծայրէ ծայր արեան, աւերածոց, սովի, զերութեան, ազգափոխութեան ևուշից թիւր աղեսից թատր դարձած — տասնուերեց դար անընդհատ, — և քսանէն կամ ցանանէհինգ միլիոն ժողովրդենէն՝ հազիւ երեց ու կէս միլիոն հայութեան բեկոր մը մացած, այնուհետեւ շատ ընական կու գայ կարծել՝ որ հայութեան այն ահազին զանգուածին հետ՝ 600–800 նախարարական և ազատիշխան ընտանիքներն ևս անդարձ կերպով անցած և անհետացած ըլլան։ Սակայն այս այսպէս ըլլալով հանդերձ, ինձ աւելի բանաւոր կը թոփ ըսել նոյնպէս, որ հայութեան մընացեալ փոքրամասնութեան մէջ յարատեած ըլլան նաեւ այն իշխանական ընտանիքներէն — և մասնաւրապէս կամսարական տոհմէն ճետեր — որոնց ամենէն աւելի ամուր դիրքերում ամրացած էին, և վրտանզի ժամանակ ալ դիւրութիւն և միջոցներ ունէին տեղէ տեղ փոխազդուելու և յունական պետութեան սահմանները պատսպարուելու, մտածելով մասնաւնդ որ յաճախ անինչ և անօգնական ժողովուրդն էր, որ բոյսի պէս թէ իր հողին վրայ արմատացած և թէ այլուր փոխազդուած ժամանակ աւելի և աւելի կորստեան կ'ենթարկուէր։ Այս թանիս ի հաստատութիւն շատ օրինակներ կան մեր ազգի և աշխարհի պատմութեան մէջ, բայց բաւական ըլլայ յիշել մէկը միայն, այն է իշխարառութիւնիներու իշխանութիւնը խախտուելէն ետքը սասունեցի 50 աթիւ իշխանաց անվաս փախուստն ի կիլիկիա, և թիշտենէն թունաց վրայ տիրանալը, որով և կազմուեցաւ նոր հայրենիք և նոր թագառութիւն ի Հայա-կիլիկիա։ Այս, իսորհելու նոր գարձեալ թէ իշխանութիւնը մէջ անընդհատ աւելի կամ տէր Շիրակայ, Արշարունեաց, Բագրեանոյաց, Կաղուսանայ և Բասենցի յորջութման տակ՝ յիշատակուէին կամսարականը, և ստուգիւ ալ յիշատակուած են։ Վերջապէս՝ զարմանը չէ որ կամսարականները երբեմ ազգախառնութեան, և երբեմ երբեմ ալ ժամանակաց քաղաքական փոփոխութիւններու և տիրապեսող ցեղերու և լեզուի ազդեցութեան պատճառաւ իրենց հին առհմային անուններէն

բական տուները և լոեց անոնց հոյակը, այսպէս որ այնուհետև Աշոտներու, Ամբատներու, ևն, շուրջը կը գառնան ընդհանրապէս պատմագիրներն այսպէս նաեւ իրուբինեանները թագառութիւն ըլլալէն ետքը՝ լէսններ և չեթումներ են որ իրենց սերունդներով կը զրաւեն ամենուն ուշադրութիւնը, իսկ Բագրատուննեաց մասին բացառիկ զիպաց մէջ միայն կը խօսուի։ Այսպէս ահա եղաւ նաեւ կամսարական նշանաւոր ընտանիքի նկատմամբ, այսինքն՝ երբ Արծրունեաց, Բագրատուննեաց և Իրուբինեանց տիրապետութեամբ կորսնցուց նա իր նախկին իշխանութիւններն և փառքը, ընկղմեցաւ միւններուն մէջ։ Սակայն ինչպէս միւս գլխաւոր նախարարական տուները, ինչպէս օրինակ իմն Բագրատունիք, Մամիկոննեանց, Արծրունիք և Պահլաւունիք, իրենց իշխանութենէն խոնարհած և հոչչակը կորուսած ժամանակներում իսկ շարունակեցին՝ ամրող դարերով՝ իրենց ցեղական գոյութիւնը. այսպէս խօրհելու շատ իս մանաւանդ իրենց բնաշխարհին մէջ բնութենէն ամրացած և անհետաց գուրս տարածուած կամսարականներու մասին։ Հետեւարար՝ զարմանը չէ որ ինչպէս տոհմային՝ այսպէս ևս առաւել յոյն պատմագիրներ յաճախ իրը Պահկառաւենիքներ, Մամիկոննեաններ և Արշակունիքներ կոչէին զանոնց, ինչպէս որ կոչած են Վասիլ Ա. Կայսրը, Վարդանը և Արշակուրը, թէպէս Արշակունիներուն վերջին ճետը Արտաշիրով կը սպառէր Ե. Գարու առաջին կէսին՝ ըստ միարան վկայութեան մեր պատմագիրներուն։ Զարմանը չէ դարձեալ՝ որ երբեմ հայկազն իշխան, երբեմ լոկ իշխան կամ տէր Շիրակայ, Արշարունեաց, Բագրեանոյաց, Կաղուսանայ և Բասենցի յորջութման տակ՝ յիշատակուէին կամսարականը, և ստուգիւ ալ յիշատակուած են։ Վերջապէս՝ զարմանը չէ որ կամսարականները երբեմ ազգախառնութեան, և երբեմ երբեմ ալ ժամանակաց քաղաքական փոփոխութիւններու և տիրապեսող ցեղերու և լեզուի ազդեցութեան պատճառաւ իրենց հին առհմային անուններէն

և մակդիրներէն դուրս՝ նոր անուններ և մակդիրներ եւս առած ըլլան:

Ահա այսպիսի պարագաներու լուրջ հրման վրայ հաստատուած, որոնք ոչ միայն մեր ազգային՝ այլ և օտարաց պատմութեան մէջ շատ հասարակ և անծրսութելի եղելութիւններ են, կրնանց ըսել՝ թէ թաճեան վէ մեզ ներկայացուցած կամ սարակն-Աղքամի բանակներու տոհմի շարունակեալ Աղքարանութիւնը իրական ըլլայ, և ոչ թէ լոկ կեղծքը մը: Այս այս բաւական է յիշել օսմանեան վեզիրներու բրոնւթիւնն և քամահանոյցներով եղած տոհմային ազգանուններու ահաւոր յեղաշրջութերը:

Տեսմենը թիջ մ'ալ Աղքարանութեան վաւերականութեան դէմ զինուող պարագաները:

Թաճեան վարդապետը կ'ուզէ մեզ երաշխաւորել՝ թէ իր ձեռքը ինկած անանուն հեղինակը «կամսարականաց նախարարութեան պատմութիւնը-սկիզբէն մինչև իւր ժամանակը-իրմէ յատաշ եղեալ պատմիշներու կարգով կ'երթայ և անոնց պատմածին պէս կ'ըսէ, բայց աւելի բացորոշ պարագայիւք անոնց մութ և կասկածելի թողածը՝ ասիկայ կը բացատրէ, մանաւանդ կամսարականաց վերաբերեալ բաները. և իր օրը նզանները կը գրէ տեղով, այլ կարճ ի կարճոյ»: Եւ ասկէց թիջ մը յառաջ՝ և մի և նոյն իջում կը յարէ թաճեան. «Եւ հետազորի եղայ ոչ միայն կարդալու, այլ և քաղուածօրին օրինակերու, զորն որ այս պատմութիւնն առաջնորդ ունիմ ինձի»: Սակայն դիտել կու տանը որ՝ զէթ թաճեանի խմբազորութիւնն այդ յայտարարութիւնը չարդարացներ. Վասն զի՞ ոչ միայն կամսարական տոհմին՝ կարէնեան Պահլաւէն ունեցած ծագման, այլ և ոչ իսկ Պերոզամատի որդույն կամսարի՝ որով այդ ընտանիքը առաջնակարդ նախարարութեանց կարզը զառուեցաւ, — և ոչ ալ Շահարշ Ակ մասին խօսց կ'ընէք. ո՞ւր թողունք ապա այդ ազնուատուհմ բունին Կողմակի ճիւղերը՝ որ մինչեւ Տրդատայ որդույն խոսրովի ժամանակ իսկ՝ թող թէ

Արշակ թէ. ատեն բաւական բազմաթիւ ըլլալու էին: Աղդ՝ այս բանս ակնյայտնի նշան է՝ որ այդ մասը կը պակւէր կամ սարականաց անանուն պատմազրի ցով. ապաթէ ոչ կարելի բան չէ որ թաճեան վարդապետը զանց ընէր զանի մէջ բերել, որ այնքան հարկաւոր էր իր ձեռնարկած Ազգարանութեան համար, զիտնալով որ առանց բունի մը անտեղի է ազգարանական ծառ մը ներկայացնել: Եւ ստուգի՝ այսպիսի պակասութեան ապացոյց են ոչ միայն Ա. զլիում հայոց հին պատմիշներուն զրկելն իր ընթերցողները, այլ նոյն իսկ յիշեալ ձեռազիրը իրեն ներկայացնող օտարականի բերանը դրուած այս խօսքերը. «Այս ձեռազիրս Սպերու Ա. Յովհաննու վանքին մէկ մութ անկիւնը ձգած փոշիներու մէջ զտայ, սակայն կիսակուոր և պատաստ է. արդե՛օց ձեր քով ամրող կը զտնուի՞ մի»:

Դարձեալ ձեռազիրի ճակատին վրայ զըրդշմուած վերնագրէն իսկ, զոր կու տայ մեզ թաճեանը, կը թուի նոյնը հաստատել: Ահաւասիկ ան, «Եղաղկացաղ պատմութիւն կամսարական ազգին և նախարարացն որ ի Հայոց անտի՛ ի բաժին Յունաց գաղթեալ, բնակեցան ի Եաղագոմ զաւարի, և յիշատակութիւն ինչ Սահակայ Ասպետի»: Այս վերնագիրս հաւանական է որ նոյն իսկ յիտնագոյն զըչէ մը զրուած ըլլայ՝ բայց այս ապացուած այն ձեռազիրն մնացած մասի վերին բլանցի վրայ, բան թէ պատմութեանս անանուն հեղինակէն: Յամենայն գէպս՝ երկու բան որոշակի կը յայտնէ քստ իս. այսինքն՝ նախ թէ այդ ձեռազիր պատմութեան նպատակն էր՝ խօսիլ միայն կոտորածէն վերջ յունական բաժինը գաղթող կամսարականներուն վրայ. և երկրորդ՝ Սահակ Առաքեան, որուն վրայ յիշատակութիւն կ'ըլլուէր, Սահակ Բարդատունին ըլլալու է, զիտելով որ կամ սարական Սահակներէն ոչ ոք այս տիտղոսը կրած է երբէց, մանաւանդ որ մեր գիտցածին համաձայն կայսրներէն այս տոհմի անձանց շնորհուած ընդհանուր տիտղոսներն էին Աղիիհապատ և Պատրիկ

(տես Ալիշան, Շիրակ, եր. 4): թէ ինչ պատճառաւ և պարագաներով Սահակ Բագրատոնի Ասպետն յիշուած էր հոն, և թէ այդ մասը կը գտնուէ՞ր եթէ ոչ, Բանեանի ձեռքն ինկած կիսկատար դժշագրին մէջ՝ յետոյ կը խօսինք. իսկ այժմ այս շափը կ'ըսենց որ, լաւ կ'ըլլար եթէ Բանեան վարդապետն իր բնագրէն քաղած կտորները չակերտի մէջ և ճշութեամբ մէջ բերէր, և անոր մէջ պակսած բաներն ալ որոշակի յայտարարէր, և բայց թէ այս ինչ կամ այս ինչ բանը ուրիշ պատմիչներէն քառած կը զրեմ: Բայց այս նըկատմամբ իր պահած լուսինը կասկածելի կ'ընէ թէ իր զործը և թէ աղբիւրը, յորմէ օգտուած կը կարծէ:

Երկրորդ կէտն՝ որ կասկած կը յարուցանէ իր զործածած բնագրի վաւերականութեան դէմ՝ են տարեթիւերը, որոնք բրաց ի սակաւուց ումանց հակաժամանակագրական են և քմահանոյ, եթէ իր կողմէն զրուած համարինք և եթէ ընդորինակողներէն: Նա՛ թերեւս այս բանս արդարացնելու համար՝ արդէն հետեւեալ ծանուցումը կ'ընէ ընթերցողներուն իր բնագրի մասին. «Ավսոս որ անհոգութեամբ անկիւններու մէջ ձգելով՝ թերթերն անձրւէն թոշուած, բայց մասին պատտած և բայց մասին արրուած էին, ասոր համար զրբին ձիշ բուականը և հեղինակին անունը ըբկային, պատմութեան անուանց շարքը կը կարդացուիր, բայց ժամանակին թիւերը ամրող լիային»: Առ որ իրաւամբ պիտի ըսէ ամէն բանիրուն ընթերցող. հապա եղած թուանշաններուն անձդութեան համար ինչ ըսենք: Եւ սակայն այսպիսի չքմեղանց մ'ինչ նպատակաւ ալ եղած համարինք, մեր կասկածը փարատելէն աւելի՝ յոյժ կասկածելի կ'ընեն՝ նաև երրորդ տեսակէտով մը՝ իր կամ իր բնագրի պատմականութիւնը:

Եւ ստուգիւ, Բանեան վէ մեզ աւանդածին մէջ միայն թուանշաններու անձդութիւնը չէ, որ զմեզ կը վարանեցնէ, այլ ինչ պատմական անուններ և դէպքեր իսկ, — «որոնց շարքը կը կարդացուէր»,

ըստ իր բէջ յառաջ ըրած յայտարարութեան, իր առջև ունեցած բնագրին մէջ՝, — զդրաղղարար չեն համաձայնիր ամենուն ծանօթ և ընդհանուր կերպով ամենէն ընդունուած զիպաց հետո: Եւ այս կարգի անհամաձայնութիւններէն են, օրինակի աղագաւ, Գ. զիսում Արշակյ կոտորածէն ապրող Սպանդարյան կամսարականին՝ իր երկու որդւոց՝ Շաւարշ Բի և Գագաւոնի հետ նախ ի թերուտիլիս և անտի առ Փոքր Թեոդոս (!) ապահնիլն, որ և ոչ իսկ ծնած էր թերեւս այդ զէպքին ատեն: Դ. զիսոյն մէջ՝ ոչ միայն վահան Մամիկոնեան և իր նիզակակիցները, Ներսէն և Հրահատ կամսարականները, Պարսից Շավոն Բին ժամանակակից եղած կ'աւանդուին, այլ որ աւելի անտեղին է՝ սա ալ 483ին իր Հազարաւուիս Մարզպանը կը դրէս զօրքով Վահանեանց դէմ պատերազմելու, չնայելով որ Շավոն Բին՝ մինչև Վահան հինգ Սասանեան թագաւորներ իրարու յաջորդած են, և Հազարաւուիսն ալ Պերոզի սպարապետն էր և ոչ Շավոն: Ե. զիսում Խոտալիոյ կառավարիչ՝ Ներսէն Պատրիկին համար կ'ըսուի, թէ յետոյ Փոքր Յուստինոս (Բ) կայսեր հետ աւրուեցաւ... և թոյլ տուա Լոնգորարտացուց որ կայսեր սահմանները աւրեցին». մինչեռ ըստ Հեն. Գլցերի (Abriß der Biz. Kaisergesch. S. 941), Վերջէն շինուած առասպել մ'է և Ներսէն՝ Յուստինոս Բին հետ ալ գործ ունեցած չէ, այլ Յուստինիանոս ԱՅ: Զ. զիսում Ներսէն Բասենցիին համար կ'ըսուի, թէ յամին 662 Փոքր Յուստինոսին կողմը անցնելով Պարսից Խոսրով թագաւորին դէմ պատերազմեցաւ, մոռնալով որ այս կայսը 665ին գետ նոր գահը բարձրացեր է իրու յաջորդ Յուստինիանոս ԱՅ: Այսպէս է նաև Սիրիան փաշայի մահը և Ճէլալիններու ապստամբութիւնն և ասպատակութիւնները 1606ին գնելը, մինչդեռ վերջիններս ըստ Այց. Թաւրիզեցւոյն 1599էն ի վեր սկսեր էին:

Զորրորդ՝ 591 թուականէն 650, աստի մինչև 789 թուականը, աստի մինչև

829 թուականը, 829էն մինչև 1049, աստի մինչև 1606 թուակ. և 1606էն մինչև 1694 թուականներում ընդարձակ պարագ միջոցներ կը տեսնուին բաճեանի քով, իսկ այդ պարագութիւնը լեցնել ջանացուած է երբեմն մի միայն, երբեմն երկու, և երբեմն ալ 3-4 կամսարական իշխաններու անուններով, կապելով զանոնց ի հարկէ Հ. Միք. Զամշեանի կամ լաւ ևս անոր պատմութեան մէջ խտացուած հայ և յոյն պատմագիրներուն ծանօթ այս ինչ կամ այն անցքի հետ, առանց իրենց, այսինքն է՝ կամսարականներու յատուկ մանրամասնութիւններուն. բացառութիւնները կամ նորութիւնները խիստ քիչ են: Այս երեսոյթս հասարակ է ոչ միայն կամսարականաց պատմութեան անանուն հեղինակին ընծայուած մասին, այլ և անոր շարունակողին և ըստ իմրե նաև թաճեան վարդապետէն գրուած յաւելուածին, որ համեմատութեամբ առաջնոց աւելի հարուստ է մանրամասնութիւններով և աւելի կապակցեալ:

Այդ՝ բոլոր այս և գեռ ուրիշ մանր պարագաներու ընտութիւնը, մանաւանդ թէ Զամշեանի պատմութեան մէջ պատմուած նոյնանիթ անցքի հետ ինամուտ բաղդատութիւնը և սերտ աղերսը՝ կարծէք թէ այս տիտուր հետևութեան կը տանին զիս, այսինքն թէ թաճեան վիկ գործածած գրաւոր աղբիւրն՝ և ոչ իսկ Այս. Անեցույ ժամանակագրութեան պէս – թէկ համառուս – միապաղաղ և անթերի գործ մ'եղած է, այլ կամ կամսարականաց եաիսկոպոսաց գաւազանագրութեան և Աշշակունի և թագրատունի թագաւորաց ցանկերու նման անուանացուցակ մը՝ կամսարական տան, և այն իսկ ոչ կատարեալ տեսակէն, այլ ընդհատութիւններով. և կամ և ոչ իսկ այդպիսի անուանացուցակ մը, այլ լոկ Ապերու մէջ Ա. Յովհաննու վանքում պահուած հատուկտոր արձանագրութեան գրութիւններ կամսարական իշխողաց մասին, և այս իսկ՝ նոյն վանցի միաբաններէն կատարուած այլ և այլ ժամանակներու դժուար պարագայից մէջ:

Եթէ այսպէս եթէ այնպէս՝ կը հետեւ, որ բանեան վարդապետը – որ արդէն մը տալցած ըլլալով Ալլահի վրատեանները որպէս կամսարականաց յաջորդներ ցուցնել – ստիպուած էր այդ չոր ու թերատ անուանացուցակը ոչ միայն ամբողջացնել, այլ պատմական դէպքերու և դէմքերու հետ կապել: Եւ այս բանիս համար դիմած է նա հաւանօրէն Զամշեանի պատմութեան, վասն զի հոն ամփոփուած էին մինչև իր ժամանակ զոյութիւն ունեցող բոլոր պազային և օտարազգի պատմութիւնները, զորնը ինքը միջոց չունէր առանձին կարգալու:

Այս, բազմահմուտ այդ պատմաբանէն կրկնակի օգոտուած է բանեան, այսինքն նախ այս տեղ հանդիպելով նա կամսարական ընտանեաց մէջ սովորաբար զործածուած իշխանական անուններու՝ առանց մականուան կամ ազգանունի, առած և ներմուծած է կամսարականաց ազգաբանութեան պարապ կամ ընդհատուած միջոցներում, թ. Այդ անունները մարմնացընելու համար՝ կամեր է զանոնց – և որ զարմանալին է երբեմն զոյգ զոյգ, և երբեմն նոյն իսկ խմբովին – այս ինչ կամ այն պատմական և ժամանակագրական վէպին հետ, իբր թէ այդ զոյգ կամ խմբովին յիշուած անձինքն ամէնքն ալ մի և նոյն տարին ապրած և գործած ըլլային: Անկէց, բնական է, որ յառաջ զային ժամանակագրական և պատմական վրիպակներ, որոնց պատասխանատուութիւնը խմբագրողին վրայ միայն պէտք է որ ծանրանայ և ոչ թէ Զամշեանին:

Այս երկու կէտերս իսկ ապացուցանելու համար՝ կան բաղդատութեան զանազան եղբեր. բայց ես՝ համառութեան համար՝ անոնցմէ մի քանիին վրայ կը հրաւիրեմ ընթերցողի ուշագրութիւնը. և ահաւասիկ:

Զամշեան (Պատմ. հտ. թ. եր. 240) կը գրէ, թէ «Յաւուրս (յամին 533) սորին Յուլիսինիանոսի էր ի դրան արցունի համարաւելն Ներսէս Պատրիկ՝ յազգէ նախարարութեան Մեծին Հայոց», և ապա կը

յարէ. «Եկն առ սա ի կոտամնդինուպօն լիս Ներսէն նախարար Հայոց ի Բողբերդոյ, յերկրէն Բասենոյ, այր քաջ և զօրաւոր՝ Հանդերձ երկու եղարքը, որոց անուանք էին Հրահատ և Սահակ» : Խակ Բանեանը կը գրէ. «ԵՅՅ թուականին մեծն Յուստինիանոս Կայսեր ատեն երկելի էր Հայկազուն Ներսէն Պատրիկ կամսարական ... որ Արշաւրի որդին էր» : Եւ այս բաւական չէ, այլ և յիշեալ Բողբերդի հայ նախարարները իսկ Ներսէն Պատրիկի եղայրներ կ'ընէ՛ ըսելով. «Ներսէն Պատրիկին միւս երկու եղարքը Հրահատ և Սահակ» :

**Զամշեան** (Պատմ. հա. թ. եր. 281) 566 տարեթուկն հանդիպած վիպաց մէջ առիթ ունենալով յիշելուզներսէն Բասենցի՝ կ'ըսէ, թէ «սակաւ ինչ յառաջ ի կենդանութեան Յուստինիանոսի» — այն է՝ յամին 542 Պարսից դէմ բաջապէս պատերազմելով ինկեր էր: Բաճեան թիւրիմացութեամբ հաստատուած Զամշեանէն նշանակուած 566 թուականին և «սակաւ մի յառաջ» խորքին վրայ, միջանկալ թիւ մը և թագաւոր մը երեւակայած է, ըսելով. «ԵԶ թուականին փոքր Յուստինոս Կայսեր ժամանակ՝ Ներսէն կամսարական, որ և Բասենցի ալ կ'ըսուէր, յառաջ Պարսից թագաւորին (Խոսրովու) կամսաբոն էր, կ'երկայ որ իր հօրեղօր Ներսէն Պատրըկին պատճառուած կայսերմէ՛ երես պահեր էր... ետքը կայսեր կողմին անցաւ և արևելեան զօրաց սպարապիտ եղաւ... շատ քաջութեամբ կոռւցցաւ, սակայն կոռվին մէջ սաստիկ վիրաւորուելով ինկաւ», ևն: Կամսարականաց պատճութեան անանուն հեղինակը չէր կրնար ըստ ինքեան այսպէս յետեւառաջ շընէլ պատմական կըրպին եղելութիւնները, այլ ուղղակի Զամշեանէն գծուած ԾԵՅ թուականի յիշատակութեան մը թիւրիմացութենէն յառաջ եկած է այդ:

**Զամշեան** (Պատմ. հա. թ. եր. 454)

1. Վերը կանուխն մեր դիտած առապելը կ'ակնարկէ երբ Յուստինոս թիւ ժամանակ պատահած:

յետ յիշելու՝ յամին 829<sup>1</sup> Թէոփիլոս կայսեր Հագարացուց դէմ ըրած պատերազմը և դարձը ի Տարոն՝ կը յիշէ յաջորդի ջում, այն է յամին 830, Մուշեղ Ցրուեցի քաջ զօրավարը, այլովք հանդերձ ։ Ապա, եր. 825, կը յիշէ բարձը Հայոց վերակացուն «Վարդան ոմն կոչեցեալ վուղ» ։ և հումկ ապա եր. 843 կը յիշէ «Գմբէկի անուն հայ իշխանը, որ և Յուլիաննէն կոչիւր, որ և ասի մինել թոռն Թէոփիլէի իշխանին Խաղտիեաց», ևն: Արդ՝ տեսէց թէ բաճեան վէ Ներկայացուցած պատճութեան ժ. զիսում՝ իրարմէ 140 տարուան միջոցով հեռի և տարբեր դէպքերն ինչպէս իրարու հետ միացած են՝ և մի և նոյն 829 տարեթուի Ներքե, այսինքն յիշեալ Վարդանը՝ եղած է Վարդ կամսարական, որ Հագարացուց դէմ տարած յաղթութեան համար կոմսութեան պատիւ կ'ընդունի՝ Թէոփիլոս կայսերն՝ իր երկու եղարքը հետ. Մուշեղ Ցրոնեցին կ'ըլլայ մեծ որդի Վարդ կամսարականին. Մուշեղին ըով կը յիշուի անոր որդին Սահակ. Յովհ. Զմէկիկ կայսերը ծնած կը համարուի և ըստ անանուն հեղինակին՝ Սահակ կամսարականի Արուս կամ Արուսեակ աղջկանէն և կ'ըլլայ թոռն Թէոփիլոս իշխանին, Խաղտիեաց ևն, ևն:

Արզն քաղաքի նկարագիրն և կոտորածն ևս որ կը պատճուի ԺԱ. զիսում՝ 1049 Յուստինին Քրիստոսի, ուղղակի Զամշեանէն (Պատմ. հա. թ. եր. 948) փոխ առնուած է, — ի բաց առեալ Թիւդար կամ Ղարար լերան անունը, որ և ոչ ինճինեանի և ոչ ալ Ալբշանի Աշխարհազրութեանց մէջ գոյութիւն ունի: — Եւ ասոր յայտնի պացայցը այն է՝ որ ոչ Լաստիվերտցին և ոչ ալ Մատթ. Ուռհայեցի քաղաքին 300,000 բնակչաց և 800 եկեղեցիներուն որոշ յիշատակութիւն կ'ընեն, այլ Զամշեանէն միայն, առնելով Զոնարասէն և կեղրենուին:

Սակայն ամենէն աւելի շօշաբեկի փոխառութիւնն է հետեւեալը. Զամշեան իր ժամանակագրական Աղիւսակին մէջ (եր. 98) ձէլալիք ելուզակներու ծագութն և

բազմանալը 1598-1608 տարիներուն մէջ նշանակելէն վերջ, ապա իր Պատմ. հո. Գ. 554 իջում կը յիշէ, յամին 1606, Այնան փաշային՝ Շահարաս թագաւորի դէմ պատերազմիլը, յաղթուին ու անձնասպան ըլլալը: Արդ՝ Բանեան վարդապետն առանց ուզ զնելու Զամշեանի ձէլալիներու մասին քծած առաջին տեղույն՝ համաձայն վերջինին Այնան փաշայի մահուանէն ետքը եղած կը պատմէ ձէլալիներու օսմանեան թագաւորէն ապստամբիլն ու ելուզակութիւնը. մինչեւ ինչպէս վերը տեսանց Առաք. Թաւրիզեցին (Պատմ. զլ. է. եր. 64) իսկ՝ Այնան փաշայի մեռնելէն տարիներ յառաջ, այսինքն է 1598ին կը զնէ անոնց ապստամբութիւնը, և մի առ մի կը յիշէ ապստամբ փաշաներու անունները: Բանհանէն գործածուած ձէլալիք անուանածն իսկ ուղղակի Զամշեանին վրայ մատնանիշ Կ'ընէ, վասն զի Առաքել պատմէը միշտ Զալալիք կը գրէ:

Հինգերորդ փաստ մ'ալ կը կազմէ հետևեալ դիսողութիւնը, այսինքն՝ Բանեան վարդապետ, անանուն հեղինակի վրայ զրած ծանօթութեան մէջ, կը յայտարարէ թէ «Այս հետազրդիու մարդումն (այսինքն անծանօթ եկալուէն) շատ թախանանօք միայն մէկերկու օր մը կարդալու համար առի այս գիրքը (այսինքն է Զեռազիրը)... և աւելի հետաքրքիր եղայ ոչ միայն կարդալու, այլ և քաղուածորէն օրինակելու, զորն որ այս պատմութեան առաջնորդ ունիմ ինծի»: Իսկ իր գրութեան վերջը՝ այսպէս և Յառաջարանէն յառաջ դրուած ընծայականին ներքեւ ալ ընդհակառակն այսպէս արձանագրած է: «Գրեալ երրեմն ի կարին քաղաք, 1853. — Եւ այժմ ի Ղալաթա կ. Պօլսոյ, 1858»: Արդ՝ վերջին յայտարարութենէն կը տեսնուի՝ թէ հեղինակս 1858ին ի կարին սկսած գրութիւնը՝ յամին 1858 ի կոստանդնուպօլիս աւարտած է: Եւ եթէ կամսարականաց պատմութեան յիշեալ ձեռագրէն քաղուածօրէն եղած ընդորինակութիւնն էր՝ որ իր ազգարանութիւնը կը

կազմէր, ուրեմն ի՞նչ հարկ կար զանի հինգ տարի վերջ, այսինքն է կ. Պօլսու ընակած ժամանակ ամբողջացնելու: Հետևեարա՝ նա այդ ժամանակամիջոցին ոչ միայն Ալլահվէրուիներուն վերաբերեալ մասը անոնցմէտ տեղեկանալով գրած, այլ և առաջին երկու մասերը Զամշեանի Պատմագրութեան վրայ ընդարձակած և ամբողջացուցած ըլլալու է: Եւ ստուգիւ՝ այս պատմագրութենէս վերը ցոյց տրուած փոխառութեանց նման ուրիշ փոխառութիւններ ալ կը տեսնուին Զամշեանէն՝ նոյն իսկ իր յօրինած մասին մէջ, որոնց վրայ հոս կանգ առնելը աւելորդ կը համարիմ:

Վեցերորդ փաստ մ'ալ կարելի է կազմել կամսարականաց տոհմին անյատուկ, նա մանաւանդ նորամուտ անուններէն. Բայց այս բանս ժամանակի և պարագայից բընական արդիւնք ըլլալով, մեծ նշանակութիւն չունի ըստ իս:

Արդ՝ Բանեան վէ ներկայացուցած ազգարանութեան վաւերականութեան մասին թիր ու դէմ եղած փաստերը մէջ բերելին վերջ՝ ես միտք չունիմ բացարձակ կերպով ընդունել կամ մերժել զայն. Ժամանակին և անդրագոյն հետազուութիւններուն վերապահեալ է վճռել զայն: Սակայն այսչափը կրնամ ըսել՝ որ այդ ազգարանութիւնը, եթէ վաւերական իսկ ընդունուի, չի կընար բացարձակապէս նոյնացուիլ ջ. գարում արդէն գոյութիւն ունեցող կամսարականաց Պատմութեան հետ: Այս՝ ոճով գրուած և ընտիր գործ մ'էր, և կամսարականներուն սեպհական գործերէն գուրս՝ կը պարունակէր նաև անոնց իշխանութեան ներքէ եղած երկիրներում կատարուած անցեցիրու և նշանաւոր անձանց վերաբերեալ մանրակէպեր ևս: Այս բանս կը հաւատարմացնէ մեզ Յովսիս, որ սրբոցն Թաթլոյ և Վարուսի մասին պէսապէս տեղեկութիւններ տալին վերջ՝ կը յաւելու այսպէս: «Զոր(ոյ) բովանդակ որպիսութիւնն գտանես ի Պատմութեան կամսարականաց»: Կորսուած այս պատմութեան և անոր հեղինակին և ժամանակի մասին առանձին և մանրամանօ-

բէն խօսիլն և գրելը կը թողունք ուրիշ առթի. այժմ այսցան միայն կ'ըսենց, որ թաճեանի ներկայացուցած անանունի գործը՝ այն պատմութեան իր սկզբնագիր կարելի չէ ընդունել, այլ որպէս շարունակութիւն մը՝ առաջնոյն վրայէն հղած կցկուուր ցաղուածովց հանդերձ, որոնցմէ մին ըլլալու է ըստ իս Ներսին կամսարականին ուղղեալ չորս տող հասուածը, զոր ի սկզբան յիշատակեցինց, Աւստի կարելի է եղրակացնել որ եթէ ճշմարիտ է թաճեանի վկայութիւնը, ըստ այնմ գոյութիւն ունեցած է երբեմն կամսարականաց եռամամն պատմութիւն մը, որուն վրայ իրաւամբ կարելի է աւելցնել նաև չորրորդը՝ թաճեանին գրուած. դիտելով որ վերջնոյս, այսինքն է Ալլահինվէրտեանց վերաբերեալ մասը՝ շատ աւելի բանաւոր կերպով միացած է իր նախորդ մասին, այն է միշ. զարում շարունակուածին հետ, քան թէ այս՝ անանունին ընդհատուած մասին հետ, Այսին բանը կընայ ըսուիլ նաև ամբողջին համար:

Ազգաբանութիւնը նոյնութեամբ հրատարակած ժամանակ՝ հարկաւոր համարեցանց տեղ տեղ ուղղագրել տառասխալները միայն, զի լիզուն ըստ բաւականին պարզ է և հասկնալի: Այսպէս նաև մը, մի թուական մասնիկն, զոր հեղինակը յաճախ մ կը զրէ միացնելով նախընթաց բարի վերջավանկին հետ, բաժնելով անոնցմէ՝ այժմու սովորական գործածութեան համաձայն ուղղագրեցինց:

Փափաքելի է որ հետազոտութիւններ ըլլուէին նաև ուրիշ նախարարական տոհմերու պայազատութեանց մասին, և հաւանական է որ այսպէսով յայտնութիւն ուրիշ հնագոյն բուներ ևս: Եւ յիրաք՝ եթէ կան այսօր պատմական ծառեր՝ որոնց իշենց ծեր և զօն արմատով դարեր ու դարեր ապրեր ու աներ են, ո՞չչափ առաւել ուրեմն մարդկային տոհմերը՝ որոնց յարանուն ու նոր սերունդները՝ ոչ միայն միշտ նոր արիւն և աւիւն կը խաղացնեն հնարմատ բնոյն մէջ և զանի կը կենդանացնեն, այլ նոյն իսկ թէ պատուաս-

տուած և թէ բամնուած ժամանակ անկէ կենդանի և կանզուն մնալով, ևս քան զևս կ անին ու կը բազմանան: Եւ միթէ կամսարական – Ալլահինվէրտեան տոհմի 16–17 զար տեղութիւնն իսկ այս տեսակէտով սփոփիչ և փառապանձ օրինակ մը չէ՝ արդեօք, եթէ ստուգով Ալլահինվէրտեան ներու պայազատութեան խնդիրը:

Հ. Բ. Վ. Սարգսեան  
(Բնագիրը յաջրդիչ)



### Լ Է Ր Բ Ա Ր Տ Ի

## ՅԵՅ ՄԻՐԻԿԻ ՊԱՐԱԳԱԴԻՒԹՅՈՒՆ

Մըրբեկն անցաւ. կը լըսեմ թըղուններուն ճըռուողվանն, ևս հան ուզույն վրայ գործած կը կարգնէ կորին: Օդն առա կը պարզ Արեւութեան երան վրայ. կը մարտուի գոշտն, ու չինչ՝ Գետա հովտն մէջ կ'երւայ: Կ'ուրսիսանայ ամէն սիրս, կ'իւլլէ աղմուկ ամէն կողմ. Ու կը սկսի սովորական աշխատանքն: Ալլահուսուորը կու զայ Բնեանը՝ երգ, ձեռքը՝ գործն՝ Իր ինանութիւն շեմին վերայ՝ զիտելու Երկնչելը նայ ու նամէտ: Իրարու համ մրցելով կիները ուրիշ կուզու կը փութան Նորատարափ անձրեւին շրէն առնելու, Ու կը կրնէ կանչեղին վաճառողն Ալորեայ ճէլը փողոցէ ի փողոց: Ահա արեւը կ'երեայ, աւասիկ Բըլլուրներուն, զաշտերուն վրայ կը ժըսուի: կը քանան տան ժառաներն՝ Ալլահինակ, պատուհաններ, պատըզամ. Եւ զրիսաւոր ճամբէն հեռան կը լըսեն Բնումներու զանէիններ. կը ճոշնէ կառցն անցորդին: Ու եր կիսա ճամբան առաջ կը տանի: Կը զաւարմանայ ամէն սիրտ: Ե՛թը իր արդ՝ կեացն է այնքան ցաղցր ու հաճոյ, Ե՛թը մարդ այնցան իսանդակաթ Եր զոքեթուն կը զեզի: Աշխատանքին կը զանայ, Կամ թէ նոր բան կը սորվի: Ե՛թը իր վետերն՝ իր արդ՝ նըւազ կը յեշէ: